

Կրդ, հաւատ. վօնսովիչ և հալ ինծիներնեք վաչեան ու Պա-
րոնեան. Նրանք 14 նիստերում գործը քննում են և վճիռ
դնում:

Հետաքրքրական չեն սեղ համար ալս վճուի մանրամաս-
նութիւնները: Հետաքրքրական է նրա բարոյական կողմը.
Ահա ինչ է ասում պատուի դատաստանը պ. Ննգիրբարեանի
մասին. «Սն գի բարեանի գործ ուն է ու թեան
մէջ դատաստանը չնկատեց եղծումն երի
նշուլ անգամ»:

Մեղ թւում է, որ պ. Ննգիրբարեանը միանգամայն գոհ
պիտի լինի հասարակական մի մարմնի—պատուով դատաստա-
նի վճռով. Գալով մի քանի լրագիրների շտապ եզրակացու-
թիւններին, չը պիտի նրանց վրայ ուշադրութիւն դարձնել
և մի հասարակ միջադէպ հասարակական խնդրի դարձնել:

Մեք խօսեցինք ալս միջնադէպի մասին նախ այն պատ.
ճառով, որ նրա մասին լրագիրները ամբողջ տարի գրեցին
և երկրորդ, որ պ. Ննգիրբարեանը հալ զրականութեան մշակ-
ներից մէկն է: Նա «Արձազանքի» շնորքով աշխատակիցնե-
րից մէկն էր և նախկին դատաւու Ներսիսեան դպրոցում:

ԽԼՐՏՈՒՄԾ ԶԱՆԻԺԸ

Նետս դիպաւ նշան դրած տեղին: Քարս ընկաւ ուղիղ
ճահճի կենտրոնը—«Մշակի» սիրտը: Գորտերը գլուխ են բարձ-
րացրել և գրգռոցը սկսում է:

Անցեալ համարում տպուած իմ «ներկալ հալ մամուլ»
վերնագրով լօղուածը թոյն է թափել հէնց այն մարդկանց
կոկորդը, որոնց դէմ իսկապէս ուղղուած էր: Ըն-
ալդ խեղդոտը կոկորդներից մէկը «Մշակի» № 16-դում ժալթ-
քում է իմ դէմ 3 1/2 սիւնակ լիշոցներ: Ընթերցող, թաշկի-
նակդ պահիր քթիդ, ես պիտի առաջ բերեմ ալս լիշոցների
մի մասը: Ահա ալդ ժամանակակից մարդարիտները. «սոստ ա-
սող Մենաւոր, ամօթ քեզ, խղճալի Մենաւոր, պա-
պան ձուռնս դու, դժոխքի ծնունդ, չար լեզու,
տրաքւում ես, ով խեղճ, տապալկւող անկարօղու-
թիւն, դժբախտ, անպարտաւան, մեծամիտ, եր-
կինքը քեզ շնորք է տուել, թշուառ, քաջքշուկ,
դունչ դուռն ընկած անկարողութիւն» և այլն և
այլն:

Այս գեղարուեստական տողերի հեղինակն ինձ է անուա-
նում լիշոցաբան: Նա ինձ անուանում է պատի ծակերից
խօսող, որովհետեւ լօղուածս ստորագրել եմ կեղծ անունով,
իսկ ինքն իւր մարդարտաշար տողերը ստորագրելու փոքրիկ
համարձակութիւնն անգամ չէ ունեցել, Բայց ես ճանաչում

եմ դիմակի տակ թաղնուած առնետին և մի օր նրա հետ լմ հաշիւս կը տեսնեմ:

Ի՞նչու է «Մշակը» այս ազիպոքում լաց ու կոծը բարձրացրել, ի՞նչ է պատահել: Պատահել է մի շատ հասարակ բան: Ես Մենաւորս մեղաւոր եմ, որ համարձակուել եմ ասել ամենքից ընդունուած մի անհերքելի ճշմարտութիւն, թէ ռուսահայ մամուլը 1902 թուին ոչ մի զրական նորութիւն չի տուել բացի մի քանիսից, ոյոնք այնքան քիչ են որ չարժէր լինել և չեմ լինել: Ես ասել եմ այն արեւի պէս պարզ ճշմարտութիւնը, թէ այդ մամուլի մի որոշ մասը դարձել է բաղադր, ուր տիրում են սուտը, անուանարկութիւնը, զրպարտութիւնը, խաբարաւորիւնը, հասարակական դումարների մասին լռութիւնը, պահելը, ինքնագովութիւնը, բարեսիրտ և միամիտ վաճառականներին հարստահարելը, խեղճ ընթերցողներին իսկ և սահմանափակ ուղեղի աղիւնքներով կերակրելը և այլն և այլն:

Եթէ սուտ եմ ասել, հերքե՛ք, եթէ ոչ լսեցէք: Բայց գորտալին ճահիճը լսել չի կարող, երբ համարձակ ձեռքով արձակուած քարը վրդովել է նրա անուշ նիւրհը: Նա բարձրացրել է անասելի վախառուն, որի մէջ միայն մի խօսք կարելի է լսել. «Մենաւորը մեզ նախանձում է, Մենաւորը տրաքւում է նախանձից»: Եւ ում եմ գլխաւորապէս նախանձում: Լսեցէք: Հալ ազգի մի երեւելի պատգամախօսի, որ փորձել է վիպասան դառնալ— քիթ ու պոռնիզը զարկել է պատերին, աշխատել է հրապարակախօսի հռչակ վաստակել— թաղուել է տղմի մէջ, ձգտել է պատմաբան դառնալ ընդհանուր քրքիջ է բարձրացրել և վերջ ի վերջոյ մտել է արխիւների փոշու մէջ, ուզում է կենսաոլոր դառնալ, որպէս զի իւր խղճուկ անունը փորագրէ գոնէ լատինի մարդկանց շերիմների վրայ և է՛հ մի քիչ էլ հարստահարէ թէ նրանց անունները և թէ բարեսիրտ հարեանակիցների գրպանը...

Ինչ դարմանալի փոքրոյի մարդ է եղել Մենաւորը, որ ամբողջ հալ ազգի մէջ մարդ չէ գտել նախանձելու և սկսել է նախանձից տրաքուել, տեսնելով, թէ ինչպէս մէկը յարունակ խուճկ է ծխում մի շիրմի առջև միայն այն պատճառով, որ այդ շիրմի շուրջը հաւաքուել է հեշտ խուղովող ամբոխը, թէ ինչպէս այդ ապիկարը փառարանում է մի լատինի հանգուցեալի նոյն իսկ «հիւրասիրութիւնը»: Այն անձի «հիւրասիրութիւնը», որի անհիւրասիրութիւնը թագուն թագուն գրուած մասնաւոր նամակների մէջ պարսաւել է (ականջդ կանչի Տիգրան Նազարեան), բողոքելով, որ ինքը ապիկարը, խեղճ-խեղճ ձեռք ծոցին դրած, վիզը ծռած ժամեւով կանգնել է անհիւրընկալ մարդու դրանը և մի բրամակ թէլի անդամ չի արժանացել: Բայց, երեւի, Շուշու օղը աւելի անկեղծ է դարձնում մայրուն քան Թիֆլիսինը:

Հայտ, ինչպէս չը նախանձի անդօր՝ Մենաւորը բզէզներին, որոնք մի ընկուզաչափ աթարը գլորում են հեւելով:

երևակայելով: Թէ ժառեր են տեղից շարժում և համայն մարդկութիւնը հիացնում իրանց ուժով և հաբկէ, Մենաւորը տեսնելով ալդ հականերին, կը զգաւ իւր տկարութիւնը և նախանձից կը տրաքի:

Խլտուած ճահճի վայնասունը ասում է և մի ուրիշ բան. այն է, որ ես ամբողջ հալ գրականութիւնն եմ աշխատել մրոտել: Եւ իմ անցեալ լոգուածը կարդացել է, գիտէ, թէ իմ խօսքն ում էր ուղղուած: Բայց ճահճը վերագրում է ամբողջ գրականութեանը այն, ինչ որ միայն իւր համար է ասուած: Ինչո՞ւ: Որովհետեւ ճահճը թէ և ճահճ է, բայց իրան ծով է համարում, որովհետեւ իւր հիւանդոտ երևակալութեամբ կարծում է թէ ինքն է միայն և՛ գրականութիւն և՛ մամուլ, և՛ ազգի պարծանք, և՛ համայն հայկական կեանքի միակ առանցքը: Նա չէ ուղում խոստովանել, որ իւր ներսում տղմի մէջ չեն մտել և երբէք չեն մտնիլ Աղաբանց, Արասխանեանց, Փափաղեանց, Յովհաննէս Թումանեան, Վանցեան, Լևոն Մանուէլեան և ուրիշ շատերը, չխօսելով միասնիկ մասին, որոնք ճահճի անունը լսել անգամ չեն ուզում: Դճահճը չի ուզում նկատել, որ նոյն իսկ իւր շուրջը պտտող գրական անձինք գաղտնի նողկանքով են նայում նրա պղտորուած ջրին և ով աւելի մաքրասէր է, շտապում է փախչել ու հեռանալ:

Եւ դուք, ով խեղճեր, այս բոլորից լետոյ ինձ ասում էք, թէ նախանձում եմ և տրաքում: Ես միայն մի բանի եմ նախանձում— ձեր երեսի կաշուին: Ալդ իրաւ որ նախանձելու բան է:

Մի կէտ ես կար ճահճի գորտային կռիւոցի մէջ—ակնարկ Վարդիստական Ընկերութեան բեմի վրայ անցեալ 1902 թուականին ներկայացուած մի հալերէն նոր ինքնուրոյն պիէսի» մասին:

Ակնարկում է պ. Շիրվանզադէի «Ունէ՞ր իրաւունք» դրաման, որ ամբողջ երկու ամիս հայրուեց ճահճում և դեռ շատ պիտի հայրուի տպուելուց լետոյ: Կարող եմ հաստատապէս ասել ճահճին, որ երբէք Լէօների ոչ մի գրուածքը չիարժանանալ Շիրվանզադէի հայրուանքին կամ յարձակմանը թէկուզ ալդ գրուածը լինի 1500 էջերից բազկացած:

Այս տողերով ես վերջ եմ տալիս բանակռուին, բաական համարելով քրքրել ապականուած տիղմը...

ՄԵՆԱՌԻՐ

Ս. ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԵՈՐԳԵԱՆ-ՃՈՒՂՈՒՐԵԱՆՑ ՎԱՂԱՐՉԱՊԱՏՅԻ

«Լումար»-ի խմբագրութեան վերոյիշեալ հեղինակից ուղարկուած է «Խորհնացո՞ւն Խորհնացով պէտք է հասկանալ ք.